

30 AUGUST

ՄԷՃԱՄՈՒՆԻ ԱՆՊԱՐ

30 AUGUST

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-I-AHBAZ

65, Grand'rue de Péra, Taksim, 65

ԱՊՐԱՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ
Խորանայի իշխան Գրուց 60 35
Թարգմանի իշխան 85 45
Մեքենայի ԷՆԵՆԱՅԻՆ իշխան 20 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԳՈՐԾ

ԿԻՆԵՄԱՏՈՂԱԿԱՆ ՕԼՈՒՆՈՒՄ

Կրթության իշխանության լրագրող :

مجموعه اخبار

كادوغل تقسيم جاده سی و نهم

ՀԱՅ-ՎԱՅՈՐՈՒՄԻ ԿՐԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՏԱՐԲԵՐ Կ'ԸՍԵՆ

Հայաստանը խոստովանելով, մեծապես
կը ցաւիմ որ կ'ստիպուիմ ակամայ ձեւ-
նամուխ լինելու այսպիսի հրատարակու-
թիւններու, որոնք նկատմամբ երկու հա-
մազգի հասարակութեան՝ ժամանակիս և
կամ իր դառն պարագաներուն չեն համա-
պատասխաներ :

Մենք ի կրօնս՝ Կաթողիկէ, և ի տիե-
զերս՝ նախնական, Հռոմէական և ճշմարիտ
Ս. Եկեղեցւոյ հպատակներ ըլլալու պա-
տին ունենալով, ազգութեամբ Հայ եմք,
և շատ մը մոլեռանդութեամբ Հայու ա-
նունով պարծենցող Հայերէն աւելի Հայու
զաւակ եմք : Մեզի անտարբեր ըսելով,
անշուշտ կ'ուզեն հասկնալ թէ մենք Հա-
յու թշուառ վիճակին չենք կարեկցիր, ինչ
որ ըլլայ, անհոգ կը կենանք, վերջապէս
ազգասիրութիւն չունինք : Բայց առ կա-
րուր կէտը մոռնալու չենք թէ սոսկ նիւ-
թական կարօտութեան համար տրտայա-
տուած ազգասիրութիւնը անպտուղ ծառ
մի է : Նիւթական կարօտութեան հետ ազ-
գին բարոյական կարօտութիւնն ալ ան-
տեսելու չէ, և կամ առաջին ք. հիմնա-
կան ազգասիրութիւնը՝ ազգին բարոյա-
կան կարօտութիւնը բաւակ է : Ինչ օ-
գուտ, ազգը կը հեծէ, թշուառ վիճակի
մէջ է, անօթի է, մերկ է, ըսելով ազգա-
սէր ձեւանալ, և միւս կողմէն բոլորովին
մոռնալ ազգին բարոյական կարօտութիւ-
նը, որ ազգութեան գոյութեան անունը
տուող ամենակարեւոր պայմաններէն մին
է, մոլեռանդութեամբ աշխատել ազգին
գոյութիւնը պահպանելու, առանց աս-
տուածապաշտութեան, մինչեւ «Աս-
տուածապաշտութիւնն առ ամենայն ինչ օգ-
տակար» ըլլալով, կը սնուցանէ ազգը,
կը պահէ ազգային գոյութիւնը, կը մա-
տակարարէ նիւթական և բարոյական բա-
րիքներ ազգի յառաջդիմութեան համար :
Այդ մը, որչափ աստուածապաշտութենէ
հեռանայ, այնչափ աղետից և թշուառու-
թեանց ենթակայ կը լինի :

Ահաւասիկ երկու Միաբանութիւն, յո-
րում անած են և կը սնանին ճշմարիտ վար-
դապետներ Մեծին Սիւրբարայ, համաման
իրենց ազգասէր Վարդապետին, մեր հայ-
րենաւանդ ինքուին քաղցրախոս սոխակ
ներ, հնչողութիւն քնարներ, դարաւոր գան-
ձարաններ հայկական գրականութեան, ու-
րոնք դարերէ ի վեր՝ ամբողջ Հայութեան
բարոյական կարօտութեան առատ և հա-
մեղ սնունդ կը մատակարարեն իրեն գրա-
ւոր աշխատութեամբը : Լիբանանու բարձ-
րաբերձ մայրերէն չըլլապատուած դալա-
րագեղ երկնաբերձ ըլլակի մը վրայ Ամե-
նապաշտ Կուսին նուիրուած Զմեռուոյ այն
փառանկը վանքը, որ ամբողջ դարէ մը և
38 տարիներէ ի վեր, մեծամեծ զոհողու-
թիւններով, սոսկ կէտ նպատակի ունե-
նալով Հայութեան բարոյական կարօտու-
թեան դարմանը, այնչափ Հայ պատանի-
ներ սնուցած, կրթած, Հայութեան և ազ-
գասիրութեան հոգւով տոգորած, եկե-
ղեցւոյ ծեր և քաջ մշակներ հասցուցած
է, և կը հասցնէ ցարդ : Սրբ բռնակալու-
թեան հոլը, մահաւանդ Հայութիւնը կը

բոցակնդեր, ո՛րքան առաքելաբէն թշու-
կաթողիկէ Եպիսկոպոսներ, հարստաշա-
հալ ազգին բարոյական և նիւթական կա-
րօտութիւնը կամ վտանգը բաւակալու և
կամ ըստ կարի թեթեւեղութեամբ համար ան-
վերեր քաջութեամբ աշխատած են, և
ցարդ կ'աշխատին : Ո՛րքան Հայ-Կաթո-
ղիկէ վարդապետներ, ի սէր կամ յանու-
Հայութեան զոհուած, ամբաստանուած,
զրպարտուած, հարցաքննութիւններու են-
թարկուած, մահապարտաց բռնաւորու ան-
կիւնները ձգուած, մինչեւ անգամ բա-
տէն ազատուելու համար, բռնապետու-
թեան արքանահանդերձ իրենց առաջա-
կուած շատ մը ապօրէն պայմաններէն մէկն
ալ Հայը այս ինչ եղեւորութեամբ զրպար-
տել ըլլալով, անյողգողը կեցած և ընդ-
միջտ մերժած են այնպիսի առաջարկու-
թիւններ, և ապաւինելով յԱստուած, ա-
նօթի և ծաղաւ, օրերով, ամիսներով քա-
ջութեամբ համարած են անտանկի կոտա-
նաց, անուր նախատանաց, խարազանի
հարուածոց, և ցարդ եւս ազգասիրու-
թեան սքանչելի առաքելութիւնը գոր-
ծադրելէ չեն դադարած և չպիտի դադար-
եցէք : Վերջապէս ինչ կրկնենք, և ինչ
միւսմի թուելու ըլլամ, թերթեր պէտք են :

Անտարբեր կ'ըսեն մեզ, շատ անգամ
լսած եմ, անցած տարի Հայ թերթերու
մէջ ալ տեսնուցաւ : Հայ-Վաթողիկէ, Կա-
թողական դասը երբեք անտարբեր չէ հան-
դէպ Հայութեան, ընդհակառակն Հայ կը-
ղերը, և նոյն իսկ Հայ Պատրիարքարանը
մեծ անտարբերութիւն ունին, մանաւանդ
թէ ուժացում մը ընդդէմ համազգութեան
սիրոյն : Մենք ինչ որ ընենք կամ կրեմք
ի սէր կամ յանու Հայութեան, միշտ ան-
տարբերութիւն կը տեսնեմք մեր համազ-
գիններէն : Օրոյց, բարեաց, ազգասիրու-
թեան, քաջաշէնութեան փոխարէն՝ ասե-
լութիւն, բամբասանք, թշնամանք, ազ-
գատեցութիւն և վհատութիւն : Արդ եթէ
ասոնք և ասոնց նման երկու համազգեաց
միջեւ արժարժեքները սէրը խախտելու
անախորժ վարձուքներ ստեղծելով մեր
համազգիներէն, երեւին մինք ալ անտար-
բերութեան դիմելու ըլլամք, ո՛վ պիտի
մեղադրէ զմեզ, բայց ո՛չ երբեք, մինք հա-
մազգութեան սէրը կը ճանչնանք, կը յար-
գեմք և կը պատուեմք : Այլ Հայ Պատ-
րիարքարանը, կարծես իբր պատերազմող
տէրութեան մը թշնամոյն յաճախակի
գրաւելու լրտեսութեան ելած ըլլալով,
մեր նամակները կը գրաւէ, և չգիտեր ինչ
ծրագիր յօրինելու՝ վերջապէս նամակս մեր
Պատրիարքարանին յանձնուեր է, որուն
լուսանցքը փակեցիկով բաներ գրուած, և
ինչ ըլլային ալ արդէն հասկցուած են,
նայի և առաջ այն գրուածները ամբողջ-
վին, բառերու բոլոր նշանակութեամբ վե-
րադարձելով իրենց ծանաղաբախ հեղի-
նակներուն, երկրորդ, ուրիշին նամակին
մէջ գրիչ խաղցնելով, այնպէս բաներ գը-
րելով՝ վատ, զձեռք և անպատիւ մարդոց
գործ է ըսելու չեմ վարանիր, և անա այն
զառանցանաց տողերը գրուած մասը կըտ-
րելէն ետքը նամակս մեր Պատրիարքարա-
նին յանձնելով, ըսածներս մի մի կ'ապա-
ցուցանեն իրենց վրայ : Ինչ ապուշու-
թիւն, ուրիշին էր այն նամակը, երբ և
ինչպէս որ ըլլայ, այնպիսի վատութիւն
մը երեւան պիտի ելլէր, այն նամակը պի-

տի փետուէր, պիտի պահանջուէր և
պիտի վերադառնար իր տիրոջ, քանի որ
յիմարաբար հրատարակել տուին... բա-
նականի գործ չէր : Հայ Պատրիարքա-
կան փոխանորդ Դուրեան Դեռնդ Վար-
դապետ՝ իր առած բացատրութեան մէջ
կը գրէ որ նամակս սխալմամբ իրենց ձեռ-
քը անցնելով, սխալմամբ բացուեր է, և
պարունակութիւնն ալ ինչպէս հրատա-
րակուած ըլլալը չեն գիտեր : Եւ ինչ ու կը-
րակ բացատրութիւն. նամակս սխալմամբ
բացուեր և կարդացուեր է. ո՛ւր, անմի-
ջապէս Հայ Պատրիարքարանին մէջ, խմ-
բագիրները ինչպէս պիտի հրատարակէին
Պատրիարքարանի պէս պաշտօնութեան
անհրաժեշտ հաւանութիւնը շտայցած, քա-
նի որ այն տեղակարգայ և արկածեալ նա-
մակը առժամանակեայ գերի մ'ըլլալով
Հայ Պատրիարքարանին (անշուշտ Դուրեան
Վ. ին ձեռքը) իր տնօրէնութեան վճռոյն
կ'ապաւնէր : Ուրեմն քանի որ նամակս Հայ
Պատրիարքարանին մէջ սխալմամբ (թէ եւ
անհաւատալի) բացուեր և դիտմամբ կար-
դացուեր է, նոյն Պատրիարքարանի կող-
մէն ալ դիտմամբ և պաշտօնապէս հրա-
տարակութեան տրուեր է, նոյն իսկ տրու-
ուած բացատրութիւնը կը դատապարտէ
գրիւնը : Իսկ եթէ Դուրեան Վ. հրատա-
րակման մասին նորէն տգիտութիւն պնդէ,
այն ատեն պէտք է ըսել թէ ինչ տեսակ
Պատրիարքարան է այն, որ իր պաշտօն-
թեան հասած, ձեռքովը բացած, աչքովը
կարդացած, իր տրամաբարութեան կաշ-
կանդուած նամակին շուրջը, և կամ իր
պաշտօնալայրին մէջ ինչ կ'անցնի կը
գրուայ, երբեք լուր ու տեղեկութիւն
չունի : Դուրեան Վ., իր բացատրութեան
մէջ, իրենց անվայել վարձուքը սփռելի
կը ջանայ, որոյ վստահ մանաւանդ գրած
նամակս համար աւելի ցաւելով, պարու-
նակութեանն ալ կ'առաջարկուի արժանի
ըլլալը կը յայտնէ : Ինչ ըրած եմ, պատ-
ուական Վ., վերնազուռին նամակ մը
գրած եմ, և ինչ գրած եմ, եղելութիւն
մը, ճիշդ պարագայով, մանրամասնաբար,
և այն ալ առանձին, խորհրդաբար : Դուք
վարդապետ էք, ուսուցիչ էք այլոց, ու-
րիշին հասցէին ուղեւալ գոց նամակը պէտք
էր որ յարգէիք : Ձեր գիտութիւնը ցոյցնէիք
«Երթունք քահանային զգուշացնեն գի-
տութեան» յիշելը բարոյական սկզբունքը :
«Ձոր ինչ ոչ կամին զի արասցեն զեղ ալք»,
և դու մի ստնիցես նոյն» : Միայն եմ
միթէ նամակին մէջ գրելով. «Արտաքոյ
կաթողիկէ Եկեղեցւոյ չիք փրկութիւն» :
ճշմարտութիւն մի է գրածս, մենք այս-
պէս կը հաւատամք : Իյնի թէ մեր հա-
մազգիներն ալ ճանչնային սոյն ճշմար-
տութիւնը, թո՛ղ անհաւատներ հինցած
զաղափար ըսեն գրածիս : Այո՛, շատ տե-
ղեր մեր համազգիներուն ի կաթողիկէութե-
ան դիմելը նիւթական պատճառով մը
սկսած է. Կաթողիկէութեան ճշմարտու-
թիւնը կամայ կամայ հասկցած, և իրենց
զաւակներն ալ բարի Կաթողիկէներ եղած
են, ոչ ոք կրնայ ուրախալ զայս : Այս
խօսքերու մէջ ինչ անախորժ բան կայ
ի Լարնագա գտնուող աղքատ ու վերջին
աստիճան կարօտ համազգիներուն, ի կա-
թողիկէութիւն դիմելու յաճախութիւնը
ուսումնասիրեցի, հասկցայ, գրած եմ, և
այս մասին, գործի մը սկսելով, քիչ շատ

իրենց ընտանեայ օրական պարէնը հայ-
թաթիկ կարենալու համար՝ մեզմէ սպաս-
ուած նիւթական օգնութեան՝ ըստ պա-
հանջման վիճակի իւրաքանչիւրին, խա-
նութ մը բանալու իբր դոյզն դրամա-
զուտին՝ ասոնց մի քանի դանկան տրուել
ըլլալը Կ-Պատրիարքին ծանուցանելով,
նպատ ինքիւրեւս համար ինչ սխալմամբ
և կամ յանդիմանութեան արժանի գործ
ըրած կ'ըլլամ : Եւ երբ թէ ասոնց շարժա-
սիթ մը ունենալու, Լարնագայի Հայերը
ի կաթողիկէութեան դիմել տալու ձեռ-
նարկեմ եմ, այս յանցանք մի է, և ո՛վ
իրաւունք ունի արգելելու : Գնաւորու-
թիւնը կը քարոզուի, մանաւանդ այնպի-
սի պարագային, յորում ճանչցուելու մեր-
ձաւոր և յարմար աւելի մ'ըլլայ մէջանդ :
Կաթողիկէ կրօնքը նոր կամ Հայոց համար
անձանթ կրօնք մը չէ, զոր 19 դարերէ
ի վեր դաւանած են և կը դաւանին այն-
չափ լուսաւորեալ և միջնաւոր ժողո-
ւորներ, մեր աշխարհին լուսաւորիչ բազ-
մաշարար նահատակն Ս. Գրիգոր, Ս.
Արքիմանդիտ, Ս. Վրթանէս, Ս. Ներսէս
Մեծն, Ս. Սահակ Պարթեւ, Ս. Մկրտիչ,
Ս. Եղիշէ, Ս. Մովսէս Խորենացի, Ս.
Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսէս Շնորհա-
ւի, Ս. Ներսէս Լամբրոնացի և ինչ ուրիշն
Պատ. Վ., ինչո՞ւ այնչափ կը վրդովիք,
կը տաքնադիք, ցաւ կը յայտնէք, և յա-
ղիմանութեան արժանի գործ մը կը դա-
տէք ըրածս : Բայց կ'ըսէք յանուն մարդ-
կութեան և ոչ յանուն կրօնի գործելու էր,
և այսպիսի նամակի մը ժամանակ չէր,
այո՛, ես նախ յանուն մարդկութեան և
միանգամայն յանուն համազգութեան,
արկածեալ Հայուն թշուառ վիճակին կա-
րեկցելով գործեցի. երկրորդ՝ կրօնական
խնդիրը եւս մէջտեղ բերելով, ոչ թէ յա-
նուն կրօնի գործեր եմ, այլ թշուառնե-
րուն յօժարութիւնը Կ-Պատրիարքին ծա-
նուցանելով, յանձնարարութիւն մը կա-
տարեմ եմ : Նամակը ժամու և ժամանակին
չսպասել, պարտադրեց պահանջուին կա-
խում ունի. պարագան այնպէս պահան-
ջեց, կարեւոր տեղեկութիւնները պէտք
էր որ գրէի և ծանուցանէի առ որ անկ էր,
բայց ժամանակն է այժմ ուրիշին նամակը
բանալու, կարդալու և հրատարակութեան
տալու : համազգութեան սիրոյն դէմ չէ՞ր :
այժմ մեր ազգային վիճակին ծանր կա-
ցութիւնը նկատողութեան առնելով, ամէն
ժամանակեւ աւելի ազգասիրութիւն, միա-
բանութիւն, եղբայրսիրութիւն արժարժե-
լու փոթի և եւանդ ցոյցնելու ժամանակն
էր :

Ուրեմն, պատուական Վ., տեսէք որ
անտարբերութիւնը միշտ Զեղմէն է. եր-
կու համազգիներուն մէջ արժարժեք
սիրոյն ուժացման պատճառը Զեղմէն կ'ըս-
կըսի. կամաւ և դիտմամբ նամակի մը
խնդրով զբոլելը և զբաղեցնելը, Հայու-
թեան և համազգութեան սիրոյն զոհուեր՝
աւելի լաւ և վիճանմանութիւն մը չէ՞ր ըլ-
լար, մանաւանդ այս պարագային : Նիւ-
թապէս և բարոյապէս Հայուն թշուառու-
թեան և կարօտութեան նպատաւոր հա-
զար տեսակ նիւթեր կան զբաղելու...
ամէն բան վերջացած՝ միւրայն Լարնագա-
յէն գրուած նամակ մը մնացած էր զբաղ-
ման նիւթ ըլլալու :

ԱՐԻՍՏԱԿԷՍ Վ. ԹԻՒՐԵԱՆ
Ժողովրդապետ Կ-Հայոց
ի Լարնագայ կիպրոսի
Լարնագա, 3 Դեկտ. (ն. տ.) 1909

(46hf)

Գ. Լուսինեանն ֆրանսագնատան էր-	72	ԲԲ
մէնսնէկ մուսավէր մէշուր լուզածն	103	5
50սնէ ճիւղի նէշը օլնսը, Պիրիննէ ճիւղի	216	50
Հ նարթի իւն դէկտեմբրտէ քիմալ օլու-	4	25
նանազ տրը: Մ'ըքէզիլ ֆիրուսիմը Մար-	8	7
բուճըրարտա «Աթիւ» քիւլիւլիւնսնէ		
տրը: Ճիւղի 1/2) բարա տրը:		

Գ.Ա.Լ.Ա.Թ.Ա. ՊՐԻՍՍԱՆԸ		
11 Դեկտեմբեր 1909		
Թէկէրա խալիփէ: Էսն. ուս.	72	ԲԲ
Բուսնէլ չըմ'նարֆէրի Ֆր.	103	5
Օսմ. Սիլիմի, չիւքէթի Լ. Ս.	216	50
Տէրլու, Թրամալա գուր.	4	25
» » Թանլ ֆր.	8	7
Բէժի	483	
Տէրխաաաաէի Բրիմըմ	17	20
Տէրգօզ	488	
Անասուր չըմ'նարֆէրի գուր.	313	
» » Թանլ	14	80
Քրէտի Յենսիէ Էթիսիէն Ա.	526	
» » » Բ.	313	
	260	25
ԱՄԶԷԼԵՐՈՒ ՖԵԼԱԹԸ		
Օսմ. լիւրաբ 100 շ. ասն	72	ԲԲ
Պէնազ մէճիսիյէ ֆարգը	103	8
Մէթալիք	100	
Բօլ	90	10
Յրանսըզ տիճունը	87	14
Ինկիլիզ լիւրաբ	110	6
Դըմից	50	
Բուսլիլ ֆուաղա	8	62

Պիտոլունիսա, ազգիմ հայտնիքեհ Ն. 85

Միւսիքը մետուլը ղազեքա
ԹՕԼԱՏԵԱՆ

Ի ՏԱՐԷ ՀԱՆԷ
Պէյօլունմա, ազգիմ հաւսեպիմեհ Ն. ԹԾ